



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբեր, 2019 թվականի № 54-Ս

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱԶՄՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ըկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասին «ժբ» կետի, 92-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 31-րդ հոդվածի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով իրականացնել արտաքին աուդիտ:
2. Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով աուդիտ իրականացնող անձ հաստատել Ընկերության կողմից ՀՀՀ-ԳՀԾԶԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի աղյուսքում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և ընտրված մասնակցից ճանաչված «Բեյքր Թիլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված աուդիտն իրականացնելու նպատակով «Բեյքր Թիլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ծառայությունների դիմաց վճարման գումարի չափ սահմանել սույն որոշման 2-րդ կետում նշված գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի կողմից բանակցությունների արդյունքում առաջարկված գումարի չափը՝ 3,468,000.0 (երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամը (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

4. Ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և դրա հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել աուդիտ իրականացնելու մասին պայմանագիր:
5. Սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարի չափով վճարումն իրականացնելու համար Ընկերության 2020 թվականի դրամական հոսքերի նախահաշվում նախատեսել համապատասխան միջոցներ:
6. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 նոյեմբեր, 2019 թվականի
ք. Երևան